Իրավ. 305808
658-Ա/2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N494
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «01» «11» 2019 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ս. Բալբաբյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2019 թվականի նոյեմբերին «Ժամանակակից դասականներ» կոմպոզիտորական փառատոնի կազմակերպման և անցկացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թ. սեպտեմբերի 16-ի N 658-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Երաժշտարվեստի և պարարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունը՝ հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Արվեստների ծրագրի» «Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Երաժշտական ստեղծագործական ծրագրեր և նախագծեր» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետում սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունը, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կապարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով ծրագրի, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի և Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ միջոցառման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամփոփ տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Կապարողը իրավունք ունի՝

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 21600,0 հազար (քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված 2-ի:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում՝ Կատարողի գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների հանձնման- ընդունման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝ օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1.-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում վերջինս Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թ. նոյեմբերի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թ. դեկտեմբերի 25-ը:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 7 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Սայաթ Նովայի 1,
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ աշխատակազմի
ՀՀ ՖՆ աշխատակազմի	գործառնական վարչություն
գործառնական վարչություն Հ/Հ.	Հ/Հ N 900018001405, հվհհ 02628699
900011024313, հվհհ 02698732	հեռ. 098310350
Պատվիրատուի ստորագրությունը	Կատարողի ստորագրությունը
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
---------- Լ. Հարությունյան	---------- Ս. Բալասանյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
01 11 2019 թ.
N 494 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Ժամանակակից դասականներ» կոմպոզիտորական փառատոնի

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Սայաթ-Նովա 1 ա, 0001
3	Ծրագրի անվանում	«Ժամանակակից դասականներ» Կոմպոզիտորական փառատոն
3.1	Բովանդակություն	Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը շարունակում է հանդիսատեսին ներկայանալ նոր նախաձեռնություններով: 2019 թվականի նոյեմբերի 1-9 սիմֆոնիկ նվագախումբը նախատեսում է Հայաստանում առաջին անգամ անցկացնել «Ժամանակակից Դասականներ» Կոմպոզիտորական փառատոնը, որի շրջանակներում Հայաստան կայցելեն մեր օրերի լեգենդար կոմպոզիտորները: Սա իր տեսակի մեջ առաջին փառատոնն է, որը բացառիկ հնարավորություն է ընձեռում մեկ տեղում տեսնելու բազմաթիվ աշխարհահռչակ կոմպոզիտորների մի ամբողջ աստղաբույլ: Այս յուրօրինակ ծրագրի նպատակն է հանդիսատեսին հնարավորություն տալ հանդիպելու մեր ժամանակի լեգենդներին և կենդանի կատարմամբ վայելելու նրանց երաժշտությունը: Նրանց թվում են Տիգրան Մանսուրյանը, Ցի Գան Չենը, Գիա Կանչելին, Քշիշտոֆ Պենդերեցկին, Ալեքսեյ Շորը, Գեորգս Պելեցիսը, Ալեքսանդր Չայկովսկին և Կառլ Ջենկինսը: Կոմպոզիտորների ստեղծագործությունները կներկայացնեն աշխարհում մեծ հռչակ ունեցող այնպիսի երաժիշտներ, ինչպիսիք են Մարիո Բրունելլոն, Գիդոն Կրեմերը և այլք:
3.2	Նպատակ	Փառատոնին մասնակցող բոլոր կոմպոզիտորները իրենց ուրույն ներդրումն ունեն համաշխարհային երաժշտարվեստում: Հայ ժամանակակից ամենահայտնի և սիրելի կոմպոզիտորներից մեկի՝ Տիգրան Մանսուրյանի ստեղծագործությունները կատարվում են ամբողջ աշխարհում, իսկ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված «Ռեքվիեմ» ստեղծագործությունը արժանացել է Classical Music Awards՝ Դասական երաժշտության միջազգային մրցույթի «Ժամանակակից երաժշտություն» անվանակարգի գլխավոր մրցանակին: Չինացի կոմպոզիտոր Ցիգան Չենը եղել է 2008 թվականի Պեկինի օլիմպիական խաղերի բացման արարողության երաժշտական տնօրենը: Նրա կամերային և սիմֆոնիկ ստեղծագործությունները կատարել են Ֆրանսիայի ազգային նվագախումբը, Սան Ֆրանցիսկոյի սիմֆոնիկ նվագախումբը և այլ հայտնի նվագախմբեր: Վրացի կոմպոզիտոր Գիա Կանչելիի հայտնի ստեղծագործություններից են յոթ սիմֆոնիաները, պատարագը ալտի և նվագախմբի համար, ֆիլմերի համար գրված երաժշտությունը և այլ գործեր: Վերջին տարիներին նրա ստեղծագործությունների համաշխարհային պրեմիերաները կայացել են Ամերիկայում և Եվրոպայում Ֆիլադելֆիայի, Չիկագոյի սիմֆոնիկ նվագախմբերի և այլ հայտնի նվագախմբերի կատարմամբ: Աշխարհահռչակ լեհ կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկու ստեղծագործությունները, որոնցից ամենահայտնիներն են «Հոգեհանգստյան պատարագ Հերոսիմայի զոհերի հիշատակին», «Չարչարանքներ ըստ Ղուկասի», «Լեհական ռեքվիեմ», «Անակլասիս» և այլ գործեր, կատարվում են ամբողջ աշխարհում: 2008, 2014 և 2018 թվականներին կոմպոզիտորը հյուրընկալվել է Հայաստանում: 2009 թ. ՀՀ նախագահի հրամանագրով Պենդերեցկին պարգևատրվել է Պատվո շքանշանով, իսկ 2013 թ. պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայութ՝յունների համար»

		1-ին աստիճանի մեդալով: 2018 թվականին Հայաստանում անցկացվել է Պենդերեցկու 85-ամյա հոբելյանին նվիրված փառատոն, որը կազմակերպվել էր Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի կողմից՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Մալթացի հայտնի կոմպոզիտոր Ալեքսեյ Շորի ստեղծագործությունները հնչել են աշխարհի ամենահայտնի համերգասրահների՝ Վիեննայի Musikverein-ի, «Քարնեգի հոլի», Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ համերգասրահի և այլ բեմերից: Կոմպոզիտորի ամենահայտնի ստեղծագործություններից շատերն առաջին անգամ ներկայացվել են Հայաստանում: Լատվիացի կոմպոզիտոր Գեորգս Պելեցիսը, ով հայտնի է իր սիմֆոնիկ գործերով, եղել է Արամ Խաչատրյանի ուսանողը: Նա ժամանակակից ինքնատիպ կոմպոզիտորներից է և նրա ստեղծագործությունները հնչում են Գիդոն Կրեմերի, Խաչատրյան Տրիոյի, Մաքսիմ Նովիկովի և այլ հայտնի երաժիշտների կատարմամբ: Ռուս կոմպոզիտոր Ալեքսանդր Չայկովսկին, ով ստեղծագործում է գրեթե բոլոր երաժշտական ժանրերում, բազմաթիվ միջազգային մրցանակների դափնեկիր և բազմաթիվ միջազգային մրցույթների ժյուրիի անդամ է: Նրա ստեղծագործությունները կատարում են բեմի հայտնի վարպետներ՝ Բորիս Բերեզովսկին, Յուրի Բաշմետը, Ռուստամ Կոմաչկովը, Սվյատոսլավ Մորոզը և այլք: Ուելսցի կոմպոզիտոր Կառլ Ջենկինսը մեծ հայտնիություն է ձեռք բերել «Խաղաղության պատարագ» (Զինված մարդը) ստեղծագործությամբ և Adiemus ծրագրով: Վերջինս կոմպոզիտորի ղեկավարությամբ հնչել է Ճապոնիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Ֆինլանդիայի, Նիդեռլանդների և Բելգիայի հայտնի բեմերում, ինչպես նաև Լոնդոնի թագավորական «Ալբերտ» սրահում:
3.3	Անցկացման ժամկետ	2019 թվականի նոյեմբերի 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9
3.4	Անցկացման վայր	Ք. Երևան, «Արամ Խաչատրյան» համերգասրահ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Հայաստան անունը՝ որպես մշակութային բնօրրան ևս մեկ անգամ հանրահռչակել, հյուրընկալել աշխարհահռչակ երաժիշտների, լրատվամիջոցների, արտիստների: Փառատոնը հետապնդում է Հայաստանի մշակութային կյանքը երկրի սահմաններից դուրս պրոպագանդելու կարևոր առաքելություն: Ցույց տալ աշխարհին, որ Հայաստանում մշակութային կյանքը պետական կարևորություն ունի, և ՀՀ կառավարությունը խրախուսում և կարևորում է միջազգային մասշտաբի միջոցառումների անցկացում Հայաստանում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	10 000 հանդիսատես

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
հհ 900011024313, հվհհ 02598732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղար
_____ Ն. Հարությունյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի պետական
սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Սայաթ Նովայի 1,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
հհ 900018001405, հվհհ 02628699
հեռ. 098310350
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն
_____ Ս. Բալասանյան
Կ. Տ.

Հավելված N 2

01 11 2019 թ.

N 494 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ժամանակակից դասականներ» կոմպոզիտորական փառատոնի
կազմակերպման և անցկացման ծախսերի
(8 համերգ)

Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազար դրամ)
1.Վարձատրություն (ներառյալ հարկերը)՝ **14301,0 հ. դ.** - Հրավիրված արտիստներ՝ 4 մարդ x 2500,0 հ. դ. = 10000,0 հ. դ. - Հրավիրված երաժիշտներ՝ 5 մարդ x 84,2 հ. դ. = 421,0 հ. դ. - Երգչախումբ՝ 1000,0 հ. դ. - Համակարգող՝ 200,0 հ. դ. - Լուսանկարում՝ 8 համերգ x 30,0 հ. դ. = 240,0 հ. դ. - Տեսանկարահանում (6 տեսախցիկ, մասնակի)՝ 4 համերգ x 400,0 հ. դ. = 1600,0 հ. դ. - Ձայնագրություն (մասնակի)՝ 7 համերգ x 120,0 հ. դ. = 840,0 հ. դ.	14301,0
2. Գովազդային և տպագրական ծախսեր՝ 450,0 հ. դ. - Գովազդային հոլովակ՝ 150,0 հ. դ. - Բաներների տպագրություն և տեղադրում՝ 212,0 հ. դ. տպագրություն (27 ք.մ,)՝ 137,0 հ. դ. տեղադրում՝ 75,0 հ. դ. - Գովազդ սոցիալական ցանցերում՝ 88, 0 հ. դ.	450,0
3. Այլ կազմակերպական ծախսեր՝ 3249,0 հ. դ. - Նոտաների շարվածք, էջադրում, տպագրում՝ 194 էջ x 1283,5 դրամ = 249,0 հ. դ. - «Արամ Խաչատրյան» համերգասրահի վարձակալություն՝ 3000,0 հ. դ. 6 օր x 500,0 հ. դ. = 3000,0 հ. դ.	3249,0
4. ԱԱՀ՝ 3600,0 հ. դ.	**3600,0**
ԸՆԴԱՄԵՆԸ	**21600,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
հհ 900011024313, հմհհ 02698732
Պատվիրատուի կտրոնագրությունը
Գլխավոր քարտուղար՝
Ն. Հյուրությունյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի պետական
սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
Երևան, Սայաթ Նովայի 1,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
հհ 900018001405, հմհհ 02628699
հեռ. 09831035
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն՝
Ս. Բալասանյան
Կ. Տ.